ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ԵԴ2/2284/02/24

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

08 ապրիլի 2024թ | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության առնելով ըստ հայցի «ՄՏԿ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ պատասխանող «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության՝ թիվ «092/GArm/24_4.3_096/04.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության մասնակիցների հայտերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՄՏԿ» փակ բաժնետիրական ընկերությանների կայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության՝ խնդրելով պարտավորեցնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին տրամադրել «ՄՏԿ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գ.Խաչատրյանի 18.03.2024թ. դիմումով հայցվող հետևյալ տեղեկատվությունը, այն է՝ «№092/GArm/24_4.3_096/04.03.24» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերը:

Հայցադիմումը 29.03.2024 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բաղիրյանին:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է «№092/GArm/24_4.3_096/04.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության /գնման գործընթացի/ հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ինչպես նաև սույն գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

Միաժամանակ, հայցվորը ներկայացրել է սույն քաղաքացիական գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդություն:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՄՏԿ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ պատասխանող «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության՝ թիվ «092/GArm/24_4.3_096/04.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության մասնակիցների հայտերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանց պահանջել «№092/GArm/24_4.3_096/04.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության /գնման գործընթացի/ հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

3. Թիվ ԵԴ2/2284/02/24 քաղաքացիական գործով դատական նիստ նշանակել 2024 թվականի մայիսի 20-ին, ժամը 12:30-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի նստավայրում /հասցե՝ Հր. Ներսիսյան 10/:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by BADIRYAN ARMENUHI 5707750282 Date: 2024.04.08 20:46:09 AMT **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**